ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍ

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

638
Թ-58

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍԻ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Պատ. խմբագիր՝ Ա.Բ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Սրբագրիչ՝ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գլավլիտի լիազոր Վ—2064 Պատվեր № 16 Տիրաժ 1500

Քանաքեռչինի տպարան, Յերեվան, Լենինի 67.

С арм-к 638/2125 р-58
24 SEP 2010

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

1. ՑԱՆՔԸ

ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Թթենու ցանքի համար նախատեսված հողը պետք է լինի՝ թեթև, փխրուն, սննդանյութերով հարուստ, քարերից ու մոլախոտերից մաքուր, մակերեսը հարթ և ջրով ապահովված։

2. Ցանքի հողամասը պետք է վարել աշնանը 30-35 սմ. խորությամբ։

3. Ցանքից 10-15 որ առաջ պետք է կատարել կրկնավար՝ 15-18 սմ. խորությամբ, փոցխել 2-3 անգամ, փխրացնել հողի կոշտերը և մաքրել քարերն ու մոլախոտերի արմատների մնացորդները։

4. Հողը լավ հարթելուց հետո մարկյորով գծեր քաշել 70-75 սմ. հեռավորությամբ ապա մարդոցով թմբեր պատրաստել։

5. Թմբի յերկարությունը պետք է լինի 10-20 մետր, լայնությունը՝ 30-35 սմ., բարձրությունը՝ 30 սմ., յերկու թմբերի միջև վոռոգման առվի լայնությունը 40 սմ։

6. Թմբերի ուղիղ լինելը և ջրի հավասարապես հոսելն ստուգելու նպատակով պետք է կատարել փորձնական վոռոգում։ Յեթե թմբերի միջև հոսող ջուրը միահավասար բարձրության վրա չի հոսում, պետք է թմբերն ուղղել։

22.911
22 APR 2013

7) Թեթև, ավազախառն չկեղևակալող հողերում ցանքը կարելի յե կատարել մարգերով, ընդունելով մարգերի յերկարությունը 2-3 մետր, լայնությունը՝ 1 մետր։

ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՑԱՆՔԸ

1. Մեկ հեկտարին պետք է ցանել 10 կգ. սերմ 80%-ից վոչ պակաս ծլունակությամբ, իսկ յեթե ծլունակությունը 80%-ից ցածր է, ըստ սերմի տնտեսական պիտանիության՝ ցանքի նորման պետք է ավելացնել։

2. Ցանքից առաջ սերմը պետք է թրջել։ Դրա համար սերմը պիտի լցնել պարկի մեջ, 2 որ պահել հոսող ջրում կամ ջրով լցված փայտյա տակառի մեջ։ Տակառի մեջ թրջելու դեպքում ջուրը պետք է փոխել որական 2-3 անգամ։

3. Յուրաքանչյուր անգամ պետք է թրջել այն քանակությամբ սերմ, վորքան վոր հնարավոր է ցանել մեկ որում։

4. Թրջելուց հետո պետք է սերմին խառնել մաքուր գետավազ 1:2 հարաբերությամբ (1 սերմ 2 գետավազ) և ապա ցանել։

5. Թթենու ցանքը պետք է կատարել այն ժամանակ, յերբ տվյալ շրջանում թթենիներն սկսում են բողբոջել և վերջացնել վոչ ուշ քան մայիսի 1-ը։ Ամբողջ ցանքը պետք է կատարել 2-3 որվա ընթացքում։

6. Ցանքը թմբային ձևով կատարելու դեպքում, սերմը պիտի ցանել թմբի յերկու կողմերում 10 սմ. լայնությամբ քաշած ակոսներում, 0,5—1,5 սմ. խորությամբ։ Ցանքը պիտի կատարել ձեռքով, սերմը ակոսում ցանել միահավասար և ծածկել հողի բարակ 0,5—1,5 սմ. շերտով։

7. Մարգերում ցանք կատարելու դեպքում մարգի լայնությամբ քաշել 10 սմ. լայնությամբ ակոսներ,

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
59129-66

իրարից 20—25 սմ. հեռավորության վրա. սերմը ցանել ակոսներում և ծածկել 0,5—1,5 սմ. հողի բարակ շերտով։

8. Նոսր ծլած, կամ բոլորովին չծլած տարածությունները պետք է կրկին անգամ ցանել, վորի համար սերմը նախապատրաստել հետևյալ ձևով. սերմը 2 որ պահել հոսող ջրում, հետո հանել, քամել, խառնել մաքուր գետավազի հետ 1:2 հարաբերությամբ, ապա 4-5 սմ. հաստությամբ շերտով լցնել փայտե արկղի մեջ և ծածկել 1—1,5 սմ. մաքուր ավազով։ Խառնուրդը 3-4 որ պահել 25-30 աստիճան ջերմություն ունեցող շենքում և խոնավությունը պահպանելու համար ջրել։ Սերմը ուռչելուց և կեղևը ճաքելուց հետո ցանել։

ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

1. Ցանքն ավարտելուց հետո անմիջապես պետք է ջրել մինչև ծիլերի յերևալն ու ամրանալը, հողն անընդհատ պահելով խոնավ վիճակում. նայած հողին՝ պետք է ջրել ամեն որ կամ 2 որը մեկ անգամ։

2. Ցանքը պետք է ջրել չափազանց զգույշ, ջուրը բաց թողնել դանդաղ հոսանքով։

3. Թմբային ցանքի դեպքում ջրել այնպես, վոր հոսող ջուրը չբարձրանա թմբի վրա, այլ անցնի ցանքի տեղից մի քիչ ցած և ջրել այնքան, վոր թմբերը լավ խոնավանան։

4. Մարգերով ցանքը ջրել նույնպես բարակ և դանդաղ հոսանքով, այնպես, վոր ամբողջ մարգը համահավասար ջրվի։

5. Թթենու ծիլերը ամրանալուց հետո ցանքի վոռոգումը կարելի յե պակասեցնել՝ ջրելով 3-4 որը մեկ անգամ, բայց այն հաշվով, վոր հողը միշտ խոնավ լինի։

6. Ցանքի հողը պետք է լինի փուխր և մա-

լախոտերից ազատ։ Առաջին քաղհանը պետք է կատարել մոլախոտերը յերևալուց հետո, չսպասելով թբթենու ծիլերի դուրս գալուն։

7. Ամբողջ վեգետացիայի ընթացքում ցանքի դաշտը պետք է քաղհանել և փխրացնել առնվազն 5-6 անգամ։

8. Ջանած տարածությունները քաղհանել ձեռքով, իսկ միջշարքային տարածությունները՝ հողուրագով կամ կուլտիվատորով։

9. Խիտ ցանքերում կարելի է կատարել նոսրացում ի հաշիվ նվազ բույսերի, թողնելով բույսը բույսից 2 սմ. հեռավորության վրա։

Նոսրացումը կատարել այն ժամանակ, յերբ բույսն ունի 5 տերև։

ՑԱՆՔԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

1. Թթենու ցանքը պետք է պարարտացնել կամ հանքային պարարտանյութերով, կամ գոմաղպով։ Հանքային պարարտանյութերով պարարտացնելու ժամանակ մեկ հեկտարին տալ հետևյալ քանակությամբ պարարտանյութ՝

ա. Ազոտային (ամմոնիում սուլֆատ) . 900 կգ.
բ. Ֆոսֆորային (սուպերֆոսֆատ) . . 500 »
գ. Կալիումի աղ . . . . . 100 »

2. Հանքային պարարտանյութը մտցնել 2 նվազով.

Առաջին՝ ազոտային պարարտանյութի 50%-ը և ամբողջ ֆոսֆորային ու կալիումի աղերը՝ ցանքից 10-15 որ առաջ, կրկնավարի ժամանակ։ Յերկրորդ՝ ազոտային պարարտանյութի մնացած 50%-ը այն ժամանակ, յերբ թթենու նորածիլ բույսերն ունեն 3-4 տերև, կամ ցանքից մեկ ամիս հետո։ Պարարտանյութը 2-րդ նվազում շաղ տալ այնպես վոր բույսերի վրա չթափվի։

3. Հանքային պարարտանյութի յուրաքանչյուր տեսակը կշռելուց առաջ պետք է առանձին-առանձին լավ մանրացնել, մաղել 2—3 միլիմետրանոց մաղով, կշռել, լավ խառնել, վորից հետո ավելացնել 1:5 հարաբերությամբ մաքուր հող (1 պարարտանյութ 5 հող) նորից լավ խառնել, այդ խառնուրդը հավասարաչափ շաղ տալ և ապա կատարել կրկնավար։

4. Ցանքը գոմաղպով պարարտացնելու դեպքում գոմաղպը հողը մտցնել աշնանը՝ ցրտահերկից առաջ, մեկ հեկտարին 40-տոննի հաշվով։

ԲՈՒՍԱԿՆԵՐԻ ՀԱՆԵԼՆ ՈՒ ՊԱՀՊԱՆԵԼԸ

1. Բուսակները կարելի յե հանել աշնանը տերևվաթափից հետո, կամ գարնանը՝ մինչև հյութաշարժումը։

2. Հանել այնպես, վոր բուսականների գլխավոր արմատը առնվազն 20—25 սմ. յերկարություն ունենա։

3. Հանած բուսակները տեղում հաշվառման յենթարկել և տեսակավորել։

4. Բուսակները գարնանը հանելուց և տեսակավորելուց հետո պետք է տնկել տնկարանում։ Յեթե նրանք վորոշ ժամանակ մնալու յեն առանց տնկվելու, պետք է թաղել հողում։

5. Բուսակների թաղման համար հատկացված տեղը պետք է լինի քամիներից պաշտպանված, հողը՝ փխրուն և պետք է պաշտպանել անասուններից։

6. Բուսակները պետք է թաղել նախորոք փորված առուներում՝ 45 աստիճան թեքությամբ։ Յեթե բուսակները հանվում են աշնանը և ձմեռը պետք է թաղած մնան, այդ դեպքում նրանց առվի մեջ պետք

և դասավորել բարակ շերտով, իսկ եթե հանվում են գարնանը, կարելի է դասավորել խրձերով 50—100-ական հատ։

7. Առվի մեջ թաղելուց հետո բուսակների արմատները և բնի մի մասը ծածկել հողով և հողը լավ ամրացնել, հողը չորանալու դեպքում վրան ջուր ցանել։

8. Տեղափոխման յենթակա բուսակները պետք է հակավորել, այն է՝ արմատները ծածկել մամուռով կամ թաց ծղոտով, ապա ամբողջ խուրձը փաթաթել թաց կտորով, կամ ճիլոպով և կապել։

9. Բուսակները տեղափոխելուց հետո, եթե ճանապարհին նրանք թառամել են կամ նրանց արմատները գունափոխվել են, պետք է ջրում պահել 1-2 որ, վորից հետո թաղել խոնավ հողում 3 որ, վորից հետո միայն տնկել։

10. Խոտան բուսակները առանձին հողամասում տնկել շարքը շարքից 50 սմ., բույսը բույսից 5 սմ. հեռավորության վրա և խնամել։

2։ ՏՆԿԱՐԱՆ (ՇԿՈԼԱ)

1. Հողի ընտրությունը կատարել նույն ձևով, ինչ վոր ցանքի համար (տես ցանքը)։

2. Հողը պարարտացնել գոմաղպով, մեկ հեկտարին 40 տոննայի հաշվով, գոմաղպի բացակայության դեպքում պարարտացնել հանքային պարարտանյութերով, տալով նույն քանակությամբ, ինչ վոր ցանքի դեպքում։

3. Տնկարանի հողը վարել աշնանը 30—35 սմ. խորությամբ, իսկ գարնանը կրկնավար անել 18—20 սմ. խորությամբ, վարած հողը փոցխել 2 անգամ, լավ հարթել և մաքրել քարերից ու մոլախոտերի մնացորդներից։

4. Տնկիները տնկել ուղիղ շարքերով, մեկ հեկտարին 40 հազար հատ, շարքը-շարքից 80-սմ. բույսը բույսից 30 սմ. հեռավորությամբ։

5. Թմբեր կամ մարգեր պատրաստելիս անպայման պետք է հաշվի առնել հողի դիրքը և ջրելու հնարավորությունը։

6. Շարքերի ուղղությունը պահպանելու համար, նախքան տնկելը պետք է լարեր ձգել կամ մարկյորով գծեր քաշել։

7. Տնկումն ավարտել մինչև ապրիլի 20-ը։

8. Նախքան տունկերը տնկելը արմատները մաքրել վիրավոր մասերից և գլխավոր արմատի ծայրը կտրել, թողնելով 18-20 սմ. երկարությամբ։

9. Տնկումը ավարտելուց հետո անմիջապես տընկարանը ջրել։ Հողը քեշի գալուց հետո բուսակի ցողունը կտրել՝ պատվաստի դեպքում 10-12 սմ. բարձրությամբ, վոչ պատվաստի դեպքում՝ 5 սմ.։

10. Կալած տնկիները պետք է լինեն վոչ պակաս 95%-ից։

11. Պատվաստման վոչ յենթակա տնկիների աչքերից դուրս յեկած ճյուղերը յերբ հասնում են 10-15 սմ., պետք է այդու սուր դանակով հիմքից կտրել, թողնելով նրանցից միմիայն մեկ ճյուղ, այն էլ ամենից ուժեղ զարգացածը։

12. Ամառվա ընթացքում կատարել ծերատում (պինցիրովկա) այսինքն բնի վրա դուրս յեկած ճյուղերի ծայրերը կտրել, թողնելով 4-5 տերև։

13. Տնկարանն ամբողջ վեգետացիայի ընթացքում ջրել 12-14 անգամ (ջրելու քանակը կախված է հողային և կլիմայական պայմաններից), վերջին ջուրը տալ սեպտեմբերի 15-ից վոչ ուշ։

14. Քաղհանը, փխրեցումը և միջշարքային տարածությունների կուլտիվացիան կատարել ըստ պահանջի, բայց վոչ պակաս քան 4-5 անգամ։

15. Գարնանը տնկած տնկիները պատվաստել նույն տարում, ոգոստոս ամսվա կեսերից մինչև սեպտեմբերի 10-ը։

16. Պատվաստելուց առաջ տնկիների բնի այն մասը, վորտեղ պետք է կատարել պատվաստը, մաքրել ճյուղերից, իսկ մնացածները թողնել։

17. Պատվաստը կատարել արմատավզից 5-8 սմ. բարձրության վրա, առավոտյան կամ յերեկոյան ժամերին։

18. Պատվաստելուց 10-15 որ հետո ստուգել պատվաստած աչքերը, չկպածները նորից պատվաստել։ Ստուգել նաև կապերը, ամուր կապերը թուլացնել, իսկ բացվածները նորից կապել։

19. Աչքապատվաստի կպչելու տոկոսը 90-ից պակաս չպետք է լինի։

20. Այն շրջաններում, վորտեղ աչքապատվաստը ձմռան ցրտերից կարող է վնասվել, անհրաժեշտ է աչքերը հողով ծածկել, կարելի յե ծածկել բուկլիցով, կուլտիվատորով, կամ հողուրագով։

21. Ուշ աշնանը բոլոր միջշարքային տարածությունները յենթարկել կուլտիվացիայի։

ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ 2-ՐԴ ՏԱՐՈՒՄ

1. Վաղ գարնանը պատվաստած աչքերի վրայից հողը հեռացնել և կապերն արձակել։

2. Վարյակների բունը կտրել պատվաստած աչքերից 10-15 սմ. բարձրությամբ, թողնելով յեղունգ։

3. Յեղունգի վրա դուրս յեկած բոլոր ճյուղերը հիմքից կտրել սուր դանակով։

4. Պատվաստը 4-5 տերև տալուն պես կապել յեղունգից։

5. Ամռան ընթացքում, ինչպես պատվաստած, նույնպես և վոչ պատվաստած տնկիների կողքերի ավելորդ ճյուղերի ծայրերը կտրատել, թողնելով 4-5 տերև։

6. Յեթե պատվաստած տնկիների 50-%-ից ավելին ունի 110 սմ. բարձրության բուն, այդ դեպքում նրանց ձևավորել վորպես միջաբուն ծառեր, մնացածը ձևավորել վորպես թփային։ 50 %-ից ցածր լինելու դեպքում, նրանց չպետք է ձևավորել այլ պետք է թողնել մեկ տարի ևս և ապա ձևավորել բարձրաբունի, յեթե նրանց բարձրությունը 130-150-սմ. է, և միջաբունի, յեթե բարձրությունը 110-սմ. է։

7) Պատվաստած տնկիների ձևավորումը կատարել հունիսի սկզբներից մինչև հուլիսի 15-ը, հետևյալ ձևով։ Տունկի արմատավզից 110 սմ. բարձրության վրա կտրել բնի ծայրը, հետագայում գագաթի վրա դուրս յեկած ճյուղերից ընտրել և թողնել 3 ամենաուժեղ զարգացած ճյուղերը, իսկ մնացած ճյուղերի ծայրերը կտրել, թողնելով 4-5 տերև։ Այդ 3 հիմնական ճյուղերն են, վոր հետագայում կազմելու յեն ծառի պակը։

8) Չպատվաստած տունկերից միջաբուն և բարձրաբուն ծառեր ստանալու համար ձևավորում կատարել հունիսի 15-ից մինչև հուլիսի 1-ը, ձևավորել՝ այնպես, ինչպես պատվաստների դեպքում, յեթե բնի բարձրությունը համապատասխանում է—միջաբունի դեպքում 110սմ., իսկ բարձրաբունի դեպքում՝ 130-150 սմ։

9. Այն տունկերը, վորոնք այդ ժամանակամիջոցում այնքան չեն զարգանում, վորպեսզի կարելի լինի ձևավորել միջաբուն կամ բարձրաբուն ծառերի, պետք է ձևավորել թփային տնկիների, այն է՝ կտրել բունը արմատավզից 20 սմ. բարձրության վրա, ընտրել և թողնել 3 առողջ և ուժեղ զարգացած ճյուղեր, իսկ մնացածը կտրել հիմքից։

10. Ոգոստոս ամսին բարձրաբուն և միջաբուն տունկերի յեղունգը կտրել, ընի վրայից մաքրել բոլոր ճյուղերը, թողնելով միմիայն 3 հիմնական ճյուղեր։

11. Տնկիները կարելի յե հանել թե աշնանը և թե գարնանը, աշնանը հանել տերևաթափից հետո մինչև ցրտերն ընկնելը, իսկ գարնանը մինչև հյութաշարժումը։

12. Տնկիները հանել այնպես, որ գլխավոր արմատի յերկարությունը լինի 30սմ-ից վոչ պակաս, արմատները մաքրել վիրավորված մասերից։ Տունկերը հանելուն զուգընթաց կատարել տնկիների հաշվառում և տեսակավորում։

13. Յեթե տունկերն անմիջապես չեն տնկվելու և յենթակա յեն պահման, այդ դեպքում նրանց պետք է թաղել նախորոք պատրաստած առուներում, (առվի լայնությունը 50սմ, խորությունը 40սմ.) արմատները և արմատավզից 20-25 սմ.բարձրությամբ բունը ծածկել հողով և լավ ամրացնել վորպեսզի արմատների արանքներում դատարկություններ չմնան։

Գարնանը թաղելու դեպքում, տնկիները թաղել խրձերով 50-100-ական հատ, իսկ աշնանը՝ բարակ շերտով, վոչ ավելի քան 2-3 հատ։

14. Տնկիները փոխադրելիս հակավորել նույն ձևով, ինչ վոր բուսակները։

3. ԹԹԵՆՈՒ ԽԱՌԸ ՊԼԱՆՏԱՑԻԱ

ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Պլանտացիայի հողն ընտրել աշնանից։ Ընտրության ժամանակ նկատի ունենալ նրա հետագա ընդարձակումը և մշակման մեքենայացումը։

2. Պլատացիայի հողը պետք է լինի ջրով ապահովված, քարերից և մոլախոտերից մաքուր։ Պլանտացիաների համար արգելվում է հատկացնել ճահճային և աղոտ հողեր։

3. Հողը վարել աշնանը 30-35 սմ. խորությամբ, ապա գարնանը կրկնավար անել 18-20 սմ. խորությամբ, քարերը հավաքել և լավ փոցխել։

4. Միջշարքային տարածությունները, Մեղրիում Ղափանում, Գորիսում, Սիսյանում, պետք է լինի շարքը—շարքից 3 մետր, բույսը—բույսից 1 մետր, Ճնացած բոլոր շրջաններում շարքը — շարքից 4 մետր, բույսը—բույսից՝ 1 մետր, հեռավորության վրա։

5. Նախքան տնկելը հողամասում պետք է լարեր քաշել, վորպեսզի կարելի լինի պահպանել տնկիների շարքերի ուղղությունը և հեռավորությունը։

6. Խառն պլատացիան տնկել հետևյալ հաջորդականությամբ. շարքը—շարքից 3 մետրի դեպքում յուրաքանչյուր 3 ծառից մեկը միջաբուն, յերկուսը թփային, իսկ շարքը—շարքից 4 մետրի դեպքում 1-ը միջաբուն 3-ը թփային։

7. Միջաբուն տնկիների համար դեռ աշնանից պետք է փոսեր փորել 0,5 մետր լայնությամբ և 0,5 մետր խորությամբ։ Թփային տունկերը տնկվում են գարնանը՝ բահով փորված մանր փոսերում։

8. Տնկելուց առաջ փոսերի հողը պարարտացնել գոմաղպով։ Տնկել աշնանը տերևաթափից հետո մինչև առաջին ցրտերը, իսկ գարնանը մինչև ապրիլի 20-ը։

9. Պլանտացիան կարելի յե տնկել թե պատվաստած և թե չպատվաստած տունկերով։

10. Տունկերի արմատները նախքան տնկելը պետք է թարմացնել. միջաբուն տունկերի գլխավոր արմատի ծայրերը կտրել, թողնելով 25 սմ, իսկ թփային տունկերինը 22 սմ. յերկարությամբ։ Կտրել պետք է նաև արմատների փթած և վիրավորված մասերը։

11. Տնկելու ժամանակ արմատները լավ դասավորել փոսի մեջ, առաջին հերթին արմատների վրա լցնել փոսից հանած վերին շերտի հողը, ապա ներքին

շերտի և հողն ամրացնել։ Տունկերը տնկել այնպես, որ արմատավիզը հողից դուրս մնա 1-2 սմ. չափով։

12. Տնկելուց հետո անմիջապես ջրել։

13. Միջաբուն տունկերի գագաթի 3 հիմնական ճյուղերը կտրել 40 սմ. բարձրությամբ, իսկ թփային տունկերինը կտրել հողի յերեսից 60 սմ. բարձրությամբ, յեթե այդ տունկերի հիշյալ (այն է 60 սմ,) բարձրության վրա հիմնական 3 ճյուղերի հաստությունը 2-3 սմ.-ի յե հասնում։

14. Ամառվա ընթացքում միջաբուն տունկերի 3 հիմնական ճյուղերի յուրաքանչյուրի ծայրում թողնել 2-ական լավ զարգացած ճյուղեր՝ յերկրորդ աստիճան ստեղծելու նպատակով, իսկ բնի վրա գտնվող մնացած ճյուղերը կտրել, թողնելով 4-5 տերև։

15. Վեգետացիայի ընթացքում պլանտացիան ջրել վոչ պակաս 8-10 անգամ։

16. Պլանտացիայի միջշարքային տարածությունները կարելի յե զբաղեցնել բանջարանոցային և բոստանային կուլտուրաներով։ Այս դեպքում ծառի բնի յեկու կողմերից մեկական մետր թողնվում է ցանքից ազատ, որը և ամբողջ վեգետացիայի ընթացքում քաղհանվում է և փխրեցվում 3 անգամից վոչ պակաս։

17. Յեթե խառն պլանտացիան տնկված է չպատվաստած միջաբուն տունկերով, անհրաժեշտ է գագաթի 3 հիմնական ճյուղերը պատվաստել, 5-8 սմ. բարձրության վրա։

Պատվաստը կատարել հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը։

18. Յերբ միջաբուն տունկերի հիմնական 3 ճյուղերի վրա թողնված 2-ական ճյուղերը 30 սմ. բարձրության վրա ունենում են 5-6 սմ. հաստություն, այդ դեպքում նույն բարձրության վրա ծայրերը

պետք կտրել՝ յերկրորդ աստիճան ստեղծելու համար։ Հետագայում այդ ճյուղերի վրա դուրս յեկած միամյա ճյուղերը կտրվում են 1—1,5 սմ. բարձրությամբ և ոգտագործվում են վորդերի կերակրման համար։

ՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

1) Վորդերի կերակրման համար շահագործման հանձնված պլանտացիայի ոգտագործումը կատարել հետևյալ ձևով.

ա) Վորդերի կերակրման 1-ին և 2-րդ հասակներում ոգտագործել թփային ծառերի բների և նրանց բուունցքների վրա գտնվող բոլոր մանր և ավելորդ ճյուղերը, ինչպես նաև միջաբուն ծառերի բնի վրայի ճյուղերը։

բ) Վորդերի կերակրման 3-րդ հասակում ոգտագործել թփային ծառերի բուունցքների վրա գտնվող ճյուղերը, կտրելով նրանց 1-1,5 սմ. բարձրությամբ և միջաբուն ծառերի բուունցքների միջին մասի ճյուղերը։

գ) Վորդերի կերակրման 4-րդ և 5-րդ հասակներում ոգտագործել միջաբուն ծառերի բուունցքների վրա գտնվող բոլոր ճյուղերը՝ կտրելով նրանց 1-1,5 սմ. բարձրությամբ։

2) Պլանտացիան վեգետացիայի ընթացքում ջրել առնվազն 5-6 անգամ։

3) Միջշարքային տարածություններն ազատ լինելու դեպքում, վարել աշնանը և գարնանը կրկնավար անել, իսկ ամռան ընթացքում մոլախոտերից մաքուր պահել։

Բների շուրջն աշնանը և գարնանը բահով փորել, իսկ ամռան ընթացքում փխրացնել։

4) Պլանտացիան կերակրման համար ոգտագործելուց հետո անմիջապես առատ ջրել և փխրացնել։

5) Պարարտացնել պլանտացիան գոմաղպով, 3 տարին մեկ անգամ տալով մեկ հեկտարին 35-40 տոննա գոմաղպ։ Գոմաղբը հավասարաչափ շաղ տալ այնպես, որ ծառերի բնից 20-25 սմ. հեռու լինի և վարել գոմաղպը հողի տակ անելով։

6. Պլանտացիան գոմաղբով պարարտացնել աշնանը։

4. ԿՈՄՊԱԿՏ ԳԾԱՅԻՆ ՅԵՎ ՀԱՏԱՏՆԿՈՒՄՆԵՐ

1) Կոմպակտ գծային և հատատնկումները կատարել այն հաշվով, որ ծառերի ցրվածություն չառաջանա և վորդերի կերակրման շրջանում հեշտ լինի նրանց ոգտագործումը։ Հատատնկումները կարելի է կատարել բոլոր տեսակի առուների ափերին, տնամերձ հողամասերում և այգիների շուրջը։

2) Մագիստրալ և այլ առուների ափերին տնկել՝ ծառը—ծառից 2 մետր հեռավորության վրա, իսկ մանր առուների, տնամերձ հողամասերի և այգիների շուրջը տնկել 3 մետրի վրա։

Նշում—Առուների ափերին տնկելիս պետք և հաշվի առնել ավի ջրի բարձրությունը և հողի խոնավանալու հնարավորությունները, ծառերի արմատների տարածման տեղերում։

3) Հողի մշակությունը, խնամքը և ծառերի ձևավորումը կատարել նույն ձևով, ինչ վոր խառն պլատացիաներում, այն տարբերությամբ միայն, որ այս դեպքում բոլոր աշխատանքները տարվում են յուրաքանչյուր ծառի վրա առանձին—առանձին։

5. ՀԻՆ ԹԹԵՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Բարձրարուն հատատունկ թթենիների տերևի բերքատվությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ և առաջին հերթին նրանց ապահովել ջրով և որինակելի խնամքով։

2) Ամբողջ վեգետացիայի ընթացքում ծառերի բների շուրջը բահով փորել 2 մետր տարածությամբ և 20 սմ. խորությամբ։

Ծառերի շուրջը փորել ամբողջ վեգետացիայի շրջանում 3 անգամ-գարնանը, ամռանը՝ ծառերի ոգտագործումից հետո և աշնանը։

3) Ծառերը պարարտացնել գոմաղպով (կարելի է նաև տիղմով), տալով յուրաքանչյուր ծառին 50-100 կգ. գոմաղպ։

4) Գոմաղպը պետք և մտցնել աշնանը, ծառերի շուրջը բնից 35-40 սմ. հեռավորության վրա և բահով փորել 20-25 սմ. խորությամբ, մտցնելով գոմաղպը հողի տակ։

5) Ծառերը ջրել 5 անգամից վոչ պակաս։

6) Վորդի կերակրման ընթացքում ծառերի պսակը մաքրել, կոտրված, չորացած և հիվանդ ճյուղերից։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳԱԳԱԹԻ ՎԵՐԱՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1) Հասակավոր, հիվանդ և ցածր տերևատու ծառերի յերիտասարդացումը և վերաձևավորումը կատարել մայիսի 10—15, վաղորոք հաշվի առնելով այդպիսի ծառերի քանակը։

Յերիտասարդացման յենթակա ծառերի հիմնական ճյուղերը փոքր թեքությամբ կտրել անմիջապես բունքի տակից, կտրվածքը լավ մաքրել և մածիկով ծածկել։

Յեթե բունը փչակ ունի և այդ փչակը գտնվում

ՀՍՍՌ-Արմ ССР

և հողի յերեսից մեկ մետրից բարձր, այդ դեպքում կտրել փչակի ներքևից, իսկ յերբ փչակը մեկ մետրից ցածր է ծառի բունը կտրել հենց գետնի յերեսից։ Յերկու դեպքում էլ այդ աշխատանքը կատարել վաղ գարնանը։

2) Գագաթ հիմնելու համար, վորդերի կերակրման շրջանում, կտրած տեղից դուրս յեկած ճյուղերից ընտրել 3 լավ զարգացած և տարբեր ուղղությամբ դասավորված ճյուղեր, հետևյալ տարում այդ ճյուղերը կտրել 40 սմ. բարձրության վրա։

Հետագա տարիներին հիմնական ճյուղերի վրա դուրս յեկած միամյա ճյուղերը կերակրումների համար ոգտագործելիս կտրել 1-1,5 սմ. բարձրությամբ։

3). Այն ծառերը, վորոնք պատվաստված չեն, ցածր բերքատու յեն և տերևները ուժեղ ալթակավոր են յերիտասարդացումից հետո պետք է պատվաստել, վորի համար վորդերի կերակրման շրջանում ընտրել 4-5 ճյուղ և հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը կատարել աչքապատվաստ։

4) Աչքապատվաստը կպչելուց և 3-4 տերև տալուց հետո ճյուղերը կտրել, թողնելով յեղունդ 12-15 սմ. յերկարությամբ։ Հետևյալ տարում, գարնանը վորդերի կերակրման շրջանում աչքապատվաստից ստացած ճյուղերը կտրել 40 սմ. բարձրությամբ, նույն տարին յուրաքանչյուր կտրած ճյուղի ծայրին թողնել 2-ական ճյուղ՝ յերկրորդ աստիճան ստեղծելու նպատակով, մնացած ճյուղերը կտրել կրկնակի կերակրումների շրջանում։

6. ԾԱՌԵՐԻ ԵՏԵԼՈՒ ՁԵՎԸ ՅԵՎ ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Թթենու ոգտագործման, յերիտասարդացման և ձևավորման ընթացքում, ծառերը պետք է ետել այնպես, վոր վոչ մի ճյուղ չհասնի հիմնական ճյուղերին, չկոտրտել ճյուղերը, կեղևը չպոկել և վերքեր չառաջացնել։

2) Թթենու բարակ ճյուղերը կտրտել այգու սուր դանակով, կամ սեկատորով, իսկ հաստ ճյուղերը՝ այգու սղոցով։

3) Բոլոր տեսակի ճյուղերի կտրվածքը պետք է քիչ թեք լինի, հակառակ դեպքում անձրևի կաթիլների կուտակումից կտրվածքում փթում կառաջանա։ Սղոցով կտրած կտրվածքը պետք է հարթել այգու սուր դանակով։

4) Յերեք սանտիմետր և ավելի հաստություն ունեցող ճյուղերի, կտրվածքները պետք է ծածկել ֆարսիդի կամ Շավրովի մածիկով։

ա) Ֆարսիդի մածիկի կազմությունն է 2 մաս տավարի թարմ աղպ 1 մաս կիր կամ դամ։

բ) Շավրովի մածիկի կազմությունն է՝ 50 մաս տավարի թարմ աղպ, 20 մաս կիր, 29,9 մաս փայտի մոխիր և 0,1 մաս կայծաքարի ավազ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0292202
ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС. Библиотека
ZUUՌ-Арм.ССР

274

22.911